ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Պատվիրատուն՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը ստորև ներկայացնում է իր կարիքների համար նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՄՆԳՀԾՁԲ-19/55 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի _հոկտեմբերի 31-ին կնքված N ՀՀՄՆԳՀԾՁԲ-19/55 պայմանագրում 2019 թվականի դեկտեմբերի 6-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝
երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման վերջնաժամկետի երկարաձգման անհրաժեշտություն

Փոփոխության նկարագրություն Պայմանագրի N1 հավելված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում ծառայության մատուցման ժամկետների փոփոխություն

Փոփոխության հիմնավորում ՀՀՄՆԳՀԾՁԲ-19/55 պայմանագրի 7.5-րդ կետ

Պատվիրատու՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ՀՀՄՆԳՀԾՁԲ-19/55-Հ1
31.10.2019Թ. ԿՆՔՎԱԾ ԹԻՎ ՀՀՄՆԳՀԾՁԲ-19/55 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «06» «12» 2019 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Ն. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և «Հերմես» ՍՊԸ-ն՝ ի դեմս տնօրեն Գ. Եղիազարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով կողմերի միջև 2019 թվականի հոկտեմբերի 31-ին կնքված պետության կարիքների համար նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման պետական գնման N «ՀՀՄՆԳՀԾՁԲ-19/55» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.7 կետը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կողմերը, փոխադարձ համաձայնությամբ, որոշեցին Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունը.

1.1.1 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման վերջնաժամկետը երկարաձգել մինչև ս.թ. դեկտեմբերի 25-ը:

1.1.2 Հաստատել ծառայությունների մատուցման նոր Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը համաձայն սույն համաձայնագրի N 1 հավելվածի.

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ծառայությունների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N 1 հավելվածը համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ և ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարական տուն 2, ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900011012938 ՀՎՀՀ 02698732	«Հերմես» ՍՊԸ Ք. Արտաշատ, Մարքսի 6/27 ԱՇԲ Արտաշատ մ/6 Հ/Հ 2479917754500000 ՎՀՀ 04203305
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն
----------Ն. Հարությունյան (ստորագրություն) Կ.Տ	----------Գ. Եղիազարյան (ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 1
« 06 » « 12 » 2019թ. կնքված
թիվ ՀՀՄՆԳՀԾՁԲ-19/55-Հ1 համաձայնագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	Մատուցման ժամկետը*
1	71241200/3	Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում	Նախատեսվում է իրականացնել ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Հին Գետիկ վանական համալիրի, ամրակայման, վերականգնման և տարածքի բարեկարգման գիտանախագծային ու նախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություններ՝ համաձայն Աղյուսակ N 1-ի ի (Վավերագրում և ուսումնասիրում կատարելու համար ներկայացվող պահանջներ)	դրամ	3780000	1	Ս/թ դեկտեմբեր 25

ԱՂՅՈՒՍԱԿ N 1՝ Վավերագրում և ուսումնասիրում կատարելու համար ներկայացվող պահանջները

	Ծառայության կատարման պահանջներ						
	անվանումը	նկարագրությունը	Մասնագիտական	Որակական	Համաձայնեցում	Մատուցման ձևաչափ	Մատուցման ժամկետ
	1	2	3	4	5	6	7
	Վավերագրում						

1	Մատենագրական գիտահետազոտական և արխիվային աղբյուրներից նյութերի հավաքում	ծանոթանալ նախկին ուսումնասիրությունների և նախագծային փաստաթղթերի հետ	մասնագիտական խումբ՝ պատմաբան(հնագետ), ճարտարապետ	տեղագրական, պատմական, ճարտարապետական (խնդիրների լուսաբանմանը նպաստող), վերլուծությունների և տեղեկությունների դասակարգում	չի պահանջվում	արդյունքները ներկայացնել մեկ էլեկտրոնային և երկու թղթային տարբերակով, ալբոմի տեսքով	Ս/թ նոյեմբեր 10
2	տեղագրական հանույթ	հուշարձանի տարածքի, կառույցների և մոտեցման ճանապարհների (կամ արահետների) տեղադրմամբ	Ինժեներ-գեոդեզիստ համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպություն	հորիզոնական 0,25 մ նիշերով Մ 1:200, Մ գեոդեզիական հանույթը կատարել Trimble, Leica կամ Topcon տիպի, ճշտությունը՝ առնվազն 3 վարկյան գործիքի միջոցով	սահմանված կարգով		
3	վավերագրում /չափագրություն, ֆոտոգրամետրիա, լուսանկարներ,/	ամբողջական չափագրություն /մետրային և ըստ անհրաժեշտության՝ տախոմետրիկ եղանակով, ֆոտոգրամետրիկ տվյալներով/, առկա քայքայումների և վնասների հստակ տեղադրում, դասակարգում և ներկայացում չափագրությունների վրա, շերտագրություն	մասնագիտական խումբ՝ պատմաբան(հնագետ), ճարտարապետ	ընթեռնելի մասշտաբով, բոլոր հիմնական տարբերակումների և չափերի տեղադրմամբ	կցել տեխնիկական վիճակի մասին ակտին		Ս/թ դեկտեմբեր 25
4	Ուսումնասիրություններ (այդ թվում ճարտարագիտական)						
	հնագիտական հետախուզում և պեղում	կառույցների պարագծով մեկ մետր լայնությամբ վերին շերտի բացմամբ	հնագիտական արշավախումբ	ըստ օրենսդրական և նորմատիվ պահանջների՝ հաշվարկներ, վերլուծություն, եզրակացություն	չի պահանջվում	արդյունքները ներկայացնել մեկ էլեկտրոնային և երկու թղթային տարբերակով	Ս/թ դեկտեմբեր25
	կոնստրուկտորական	հետազննություն և եզրակացություն կառուցվածքի առկա վիճակի վերաբերյալ	ճարտարագետ-կոնստրուկտոր	ըստ օրենսդրական և նորմատիվ պահանջների՝ վերլուծություն,			

	երկրաբանական	ինժեներաերկրաբանական հետազննություն և եզրակացություն տեղի գրունտների վերաբերյալ	երկրաբան	եզրակացություն			
	նյութագիտական	կառուցվածքում կիրառված նյութերի ուսումնասիրություն և եզրակացություն	նյութագետ				

Առդիր նյութեր և տվյալներ

	Անվանումը	էջերի քանակը	Ծանոթություն
1	Վկայագիր	-	ծանոթանալ ՀՀ ԿԳՄՍՆ ՊՄՀՊ գործակալությունում
2	Պահպանական գոտի	-	ծանոթանալ ՀՀ ԿԳՄՍՆ ՊՄՀՊ գործակալությունում
3	Առաջադրանքի ձևանմուշ	-	ծանոթանալ ՀՀ ԿԳՄՍՆ ՊՄՀՊ գործակալությունում
4	արխիվային նյութեր և գծագրեր	-	Պատմամշակութային արգելոց-թանգարանների եվ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ում և/կամ Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն>> ՊՈԱԿ-ում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

---------- Ն. Հարությունյան
ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

---------- Գ. Եղիազարյան
ստորագրություն/ Կ.Տ